


ՀԱՆԴԻՍ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈՄՊԵՅ ՀՆԴԿԱՍՑ

ՎԵՆԵՏԿՈՑ ԼՃԱԿԷՆ

(Տես Հտ. Խ, Պր. Դ, էջ 344, Հտ. ԽԱ, էջ 63, 164):



Պոմպեյ:

Մեր եռօրեայ նեղութեան վերջ տուաւ ցամաքին մերձաւորութիւնը. նուազեցաւ հողմայն սասակութիւնը, դողարեցաւ նաւուն բուռն տատանումը, և մեր ճանապարհը հորդքս ողի առինք: Բազմութիւնը սկսաւ նաւան վրայ խռնիլ, և զուարթութիւնը, ծիծաղը ու երաժշտութիւնը մեզ սկսան աւետել թէ մեր ճամբորդութիւնը յաւարտ կը մերձ նորս:

Փորձք 'ի ճանապարհորդաց կը տեղեկացնէին զանգէտքս, պատմելով այն նշաններն, յորոց սովոր էին երբեմն նաւորդք գուշակել ցամաքին մերձաւորութիւնը:

Բայտ վիպայնոյ Հին ճանապարհորդաց, Հնդկային Ուվիանոսին մէջ ցամաքէն շափաւոր Հեստուորութեամբ, կան բազմաթիւ օձեր, որոց երկայնութիւնն է տասու երկու և նաև տասու իրեք բթաշափ. ասոնք երկայն բարակ գիծ մը կը ձևացնեն, գլուխին ջրին երեսէն վեր տնկած բռնելով: Այս երևոյթս գուշակ էր թէ ցամաքը Հնախ չէր: Արդի նաւորդք իսկ ասու գած են այս սոստարանս՝

ճամբորտելով նախնեաց վկայութիւնը, այլ բայտ սոցա՝ միայն Հարաւային արեւմտեան քամին շնչած եղանակին է որ այս տեսարանս տեղի կ'ունենայ: Օձերուն գոյնը դէպին կամ պղնձագոյն է կ'ըսեն և ասոնց մեծագոյնները՝ նաև ծովուն խորերը կը դիմեն լողալով ալեաց դիմագրաւ: Ջրին երեսը անշարժ կը մնան, և անանկ ծով կ'երևան, որ շոգեհատուն անցած ժամանակն իսկ տնկելով են տեղի տալու:


Այս երևութիւն տիանատես ըլլալու ըզձակաթ՝ ուշադրութեամբ ջրին երեսը կը քննենք. բայց ունայն տեղ. այն նախնեաց վկայութիւնը միայն մեր մտաց զաղափարներուն մէջ նկարեալ կը տպաւորի, և ծովային յետին աստեղազարդ երկինքն՝ որ միայ կը Հասնի՝ զմեզ ուրախութեամբ 'ի Հանգիստ կ'ուղարկէ, յաջորդ օրուան ցաւաքային տեսարանին պատրաստելով:

Եւ լուսացաւ Հուսկ ուրեմն եօթներորդ ու վեց ջին ծովային օրը՝ զճանապարհորդքս շարժման ու գործունէութեան մէջ դնելով:

Սմանուն աչրը բղձակաթ գէպ արեւելեան հարկոնը կը շրջէր, ուսկից 'ի յայտ պիտոր դար ցամաքը: Ինչպէս անսովոր ծանրութեամբ ժամեր կը սահէին. բայց հուսկ ուրմի ցամաք ձայնը լսուեցաւ, ու տեսնենք միւռլին մէջէն նուրը գիծ մը սկսաւ մարմնահասնալ: Հետզհետէ որ կը յառաջէինք՝ լերանց կոները կը նկարուէին, և ցամաքին ողջոյն ընդարձակ գիծը կարծես մկիկ ընդ առաջ կու գար:

— Կը տեսնես ինչպէս ջրին գոյնն ալ փոխուեցաւ, բաւ ուղեկիցներէն մէկը: Այն ջինջ մութ կանաչ ջուրը՝ որ մինչև ցայտօր մեզի ուղեկիցը էր՝ սա սղտորին տեղի ստաւ. ծովուն յատակէն պատճառեալ չէամարիս: Հնդկաստանի բազմաթիւ գետերն են որ իրենց պղտոր ջրերը կը բերեն ծովուն ջրին հետ կը խառնեն՝ սա տղմուտ երանգը անոր տաղաւորելով: Քիչ առնեն Պոմպէյի մուտքը պիտի տեսնենք, որ ըստ ճանապարհորդաց, գեղեցկութեամբ ոչ խարհիս վրայ չարորոգն է, յետ կաստան գնուալօրս, Կէսպօրս, ու Պուէնոս Այրէսի: —

Ս. յառ տինկալութեամբ կը նաւէինք, ոչ ուշ գնելով սաստիկ ջերմութեանը որ ծովուն զովին յաջորդեր էր: Յամաքն հետ գնեալ յատակ կը նկարուէր. փարսք իբր յառաջդէմ՝ պահապանը կը կանգնէին և




Եղեգնակազմ նաւ Բնդիկ:

տեղացի եղեգնակազմ նաւերն՝ որ այլեայլ ուղղութեամբ թափւրնէս կ'անցնէին՝ սեամորթ ու մերկանդամ՝ աղտեղի նաւաստեաց տեսարանը մեզի կու տային:

Ուշ եղեալ կը գիտէին հետաքրքրաբար տեսնել հոչակաւ մտից գեղեցկութիւնը:

Շարք բլրոց մեր աջ դին ետէէ ետե կըդգիացեալ իրարու կը յաճորդեն: Մերձաւորագոյնք՝ ապաւած, անջրդի, անբեր և արեւակէզ անալամբ: Յաջորդքն ոչինչ տարբեր քան զառաջինս. և միայն հեռաւորագոյնք՝ խորշրգաւոր և երկնեանգ միւռլի մը մէջ թաղաւած՝ գոհացուցիչ տըպաւորութիւն մը կ'ազդեն: Աստ անդամանք 'ի բլրոց ծայր կը ձևացնեն ու տեւարանին միակերպութիւնը կը կոտրեն: Համբարութեամբ տինկալայ կը մնայի տեսանել այն գրեաթէ ամայութեան տեսարանին գեղեցկագոյն մասը. տինկալութիւն ունայն. այն մի և նոյն տեսարանը շարունակեց մինչև քաղաքին հանդէպ, ուր խարխաւ ձգեցինք միջօրէէն երեք ժամ ետք:

Փոքր շոգենաւք, և առագաստաւոր և թիւալար նաւակաց բազմութիւն մը ստեանց մեր չորս դին, շփաթութեամբ, խոտ



Հնդիկ առագաստաւոր նաւակ:

փութեամբ և աղաղակներով օդը թնդացնելով, հուարեալ, ապուշ՝ ճանապարհորդքս նաւուն երկու կողմը դիզուած՝ կը նայէինք այն խառնածայնութեան տեսարանին, 'ինչպէս նաւուն ամեն կողմէն իբր



Հնդիկ Թիւալար նաւակ:

գիւհաւոր, վեր կը յարձկէին բազմութիւն մը թարգմաններու, սպասաւորներու, կիսամերկ նաւաստներու, ամենը բոկոտն: Պառնոկ, նաւակ, ճառալար թիւն, հազար ու մէկ առաքարկութիւն կ'ըլլուի մեզի, այն պիտի յամառութեամբ՝ որ հարկ է առաջարկուները բռնութեամբ վարենք: Բայց անոնք զարձեալ կը գառնան աւելի յա-

մառ յարատեւութեամբ, և ազմկերով ու կուռելով կը քանան գուղեորս իրարու ձեռքէ յափշտակել: Նյառն մտից առջին բազմութիւնը խոնած խնողած կ'ազմկեր տւորութեան բոկոտն պաշտօնեայք ամենուն երբ կը խափանեն, մինչև որ մաքսատան քննութիւնը չըլլուն: Թղթաբերին խորձերը և ուղեորաց կաշը ասորիս անգին դիզած նաւուն վրայ չըջնը ալ աւելի կը դժուարացնեն: Դաւանակն երազ կ'անցնի, այլ ուղեորք իբր քամուած նաւէն ելլել չեն յաջողիր: Այլելով աջ գին, զարնուելով ձախ գին կը յաջողիմ ելից քով եղող սեւապէմ հնդիկ պաշտօնէին մօտենալ:

— Զէնդմէն, կ'ըսեմ, չորհրդ ըրէք փութացուցէք երթալս: ամենակարեւոր գործ մը դիս կը ստիպէ փութով ցամաք ելլիլու: Զէնդմէն տիազոսը, որու կաթողին են տեղացի Հնդկիք, բոկոտն պաշտօնէին սիրտը կ'ամօքէ: Դպիտ երեսն կը նայի յարգանք, ու ենթակայ պաշտօնէի մը ակնարկելով՝ իսկոյն կաշս, առանց ոյլ արտադրութեան, նաւակ մը կ'իջնցնէ: Չորսը կը սեղծւիմ չորսակալութեամբ, կ'իջնեն նաւակը ու կը բաժնուիմ: Ինծի կ'ընկնիք սպասուոր մը՝ որ 'ի պանդոկ պիտոր առաջնորդէ: Երեք սեւապէմ, կիսամիտ, սովալլուկ երեսութիւ տնտանեայ մարդիկ՝ շքեքիտ: Նման թիւակներով զմօտեցից գէպ 'ի ցամաք կը մղեն: Կոտացեալ բազիկ սաքրինին նոտարանաց յեց՝ կարծես իբր ընտիր առարկայ՝ բազմողիս տեսարան կ'ուզեն տար կը յառաջնը գէպ ամբարտակ մը, ուր սպիտակապզեմտ Հանդիսականոց բազմութիւն մը խոնած ակնառանկ կ'ըլլան:

— Ա՛ք են տատնը որ այն հովանոց տեղը զիլուած կեցած են, կը հարցնեմ սպասուորիս:

— Տեղացիք են, կը պատասխանէ, որ երեկոյեան զովը վայելիլու հոն կը ժողովին:

— Եւրոպացի կեամմուտք արգիօք, կը յաւելում հարցնել:

— Եւ բնառ ոչ, կը պատասխանէ մարդըս: Երազով բնուռես եւրոպացի մը չես գտներ մէջըրին այս ժամուս: Եթէ զըլլաւրկին կ'որտես, կը տեսնես որ մեծադոյն մասը Փարսի են: Եւրոպացի ամուսնաբիշ կայ բազաքս: Հազիւ թէ երկու հազար կ'ելլէ: անոնք ալ ցրուած են: Քիչ մը ուշ տեսնէ այդ բնկաց բազմութիւնը կը քաշուի տեղի տալով եւրոպացոց կառքերուն: —

Յամարն որ կ'ելլում՝ ինքզինքս խաանի: Տաղանճ բազմութեան մը մէջ կը գտնեմ, որ յարգանք աջ ու ձախ կը բաժնուին ու հիւրիս ճամբայ կու տան: Ամենուն հա-

զուտը սպիտակ է: Իսկ գլխարկին՝ այլադոյն և այլածն: Ամենը ականջի օղ կը կրեն: ճակատին ուլ գունաւոր գծերով զրոյնաւ է: Հետաքրքրաբար ինծի կը նային, մինչդեռ գոռոզ Փարսին, որ իւր գրեթէ եւրոպական հագուստովը անոնցմէ կը զանազանի, ծանրութեամբ զիս կ'ողջունէ:

Մինչդեռ ես գէպ 'ի կառքերը կը քալեմ, ոստիկանութեան զինուորք որ բազմութեամբ բարեկարգութեան ուշ կը գնեն, ինձ զինուորական բարեւ կու տան, և ուշ կը գնեն որ ժողովուրդը զիս չնկռէ: Այն առաջին ընդունեղութեան տպաւորութիւնը ինծի խորհրդածել կու տայ որ օտար երկրի մը հողը կը կոխէի, որու վարչութեան գաւազանը զրիկ ժողովուրդը ահաբեկած սորվեցուցած էր գերտպացին իբր գերազանց տէր ճանաչել, և անոր առջին գողցես գերութեան չափ նուաստանալ:

Մինչդեռ կառավարիս խորագանը ձիւրը կը վարէ՝ աչքս չորս գին կը պտըտցնեմ: ամենայն ինչ ինձ նոր կու գայ ու բոլորովին տարբեր ցայս վայր տեսածներէս: Երկինք, տեսարան, մարդիկ, ամենայն ինչ նոր է: փողոցք խնդած են ամբոխիւ: սեւամարթ, միկանդամ մարդիկ լոխի և կամ կանչուրուտելով՝ ամենայն ուղղութեամբ կը շտապեն: այլք հետաքրքրաբար ինձ կը նային, և շատը այնք են, յորս նաև ոստիկանութեան բազմութիւ սպասաւորք, որ յարգանք ողջունի՝ ինձ քաթի եկար կը մողթին: Բոլոր այն երկայն փողոցը՝ ուսկից կառքս կը սրանա, և որ գլխաւոր փողոցն է, շարժման ու գործունէութեան մէջ կ'ընկնայ: Փարսինի բազմութիւն մը տուները, խանութները ելումուտ կ'ընեն: գործաւոր Հնդկաց ամբոխը, աղջիկ, կնիկ, մանչ ու երիտասարդ, խուսի խուսի արտորեք և զուարթ խաւարեղութեամբ տուներին դառնալու կը փութան: Այն բազմութեանը մէջ հազիւ երեք եւրոպացոյ մը երեսը կը նշմարեմ: սակայն Հոյական չէնքերը հոն կանգուն կեցած են, որ վկայեն անոր տիրական ներկայութեամբ: Այն կառքը որ շտապաւ կ'ընթանայ՝ յանկալած նորակառոյց շէնքի մը առջևը գաղաբերով զիս թմրութենէս կը սթափեցնէ: Grant Central Hotel հասեր էի, ուր պիտոր իջնաւ: նէի և որու վարիչը Իտալացի մէկ մըն էր:

Ի Պանդոկի

Ինձ պիտորմելի էր այս պանդոկիս և ընտրելապոյն քան զանգղիական և քան զանգաւոցը, որ մաքրատիրութեան կող-

մանէ պտրծաճը մը չունին։ Բայց երբ պունդոյին կրկնորդ ու պատուականագոյն պատկերներն սենեակ մը մոտոցին, որու մի միայն կաշն էր սնկոյին մը, աթոռ մը ու լուսացուելու անօթ մը, ապշած՝ դադարեցայ տեսնելու թէ ինչ էր այն տեղին։ Ընդարձակ սրահ մըն էր չորս մասն բաժնած, ցած առաքտակամած անջրպետով։ Վերէն բոլոր սենեակները իրարու հետ կը հաղորդուէին։ Հասարակաց ննջարան մըն էր՝ խորշ խորշ բաժանեալ, ուր մարդս ոչ երբեք կրնայ համարիլ թէ առանձնաբան մը ունի։ Այլապէս ի՞նչ դուռը կը գտնուի։ Քառակողմեան փայտեայ շրջանակ մըն էր թղթով պատած։ Կղզաճիւղ շարժական էր, ու երկու օղակի մէջէն անցնելի՝ կ'ապել ուղեով։ զրեթէ մանրադիտական բանային ձևերի մէջ կը կորսուէր, և հարկ էր մեծազգուշութեամբ քսակին մէջ պահել որ չկորսուի։ Բայց որ աւելի վարմանալին էր, այն թղթեայ դուռը անսնկ երկաշտական ճշգրտութեամբ շինած էր, որ չափաւոր մեծութեամբ կ'առու մը անուրգել անոր ճեղքերուն մէջէն կրնայ մտնել ելլել։ Դրանէ՛ զրան հանդէպ՝ հասարակաց սանդուղը գէպ ի երկրորդ դասիկները ուրիշ հիւրերու առաջնորդելով՝ սենեկին անջրպետութեան շրջանէն անցնելով, մըն էր։ Վեր ելլողներուն աչքը սղջայ սենեկին մէջ կը շրջէր։

Այս անակնկալ տեսարանին առջին դարմացած, տարտամ մտօք կը հարցնեմ տիրութիւն։


- Ո՛րչափ է սենեկին զինք։
- Հինգ ռուբլի՛ օրը, կը պատասխանէ։
- Ասկէ լաւագոյն սենեակ չունիք, կը յայտելու մ'հարցնել։
- Ամենը ասոր նման են, կը պատասխանէ պանդոկապետը։

— Կը ցուիմ, կը յաւելում ըսիւ։ Ես կը համարէի ուրիշ տեղի պանդոկայ համեմատ առանձին սենեակ մը գտնել։ Բայց ինչ որ հոս կը տեսնեմ, այս ոչ սենեակ, այլ հասարակաց սրահի խորշ մի է։

— Հոս ի՞նչ Պոմպէյ ուր երթաս՝ ասկէ տարբեր սենեակ չես գտներ։ Բայց պանդոկները ասոր նման են, եթէ ասկէ ալ գէշ չեն։ Կլիմայն աստիճան կը բերէ, և շատ բան պահանջուի չէ։ Հոս առողջութեան ամենակարեւոր պայմանը բանուկ և առատ օդն է։ Ես անձին փոքր ու փակ սենեակներ գտնաւ անկարելի է։

Այս յառաջաբանը անախորժ էր ինձ որ յետագայէ կու գայի։ Ես անկայն օրը տարա-

ժամելու հետ էր, ու պանդոկէ պանդոկ ի՞նչ խնդիր քոնֆորթեայի շրջելը գիտարին։ Հարկ էր դադարել ուր բազմա ձգեր էր գիտ։ Ես անօթագրեցի ու մնայի։ Եւ յաջորդօրէն համարեցայ որ ի Պոմպէյ լաւագոյն քոնֆորթեայ բնակարանի անկողնելու չէր։ Քաղաքին առաջին պանդոկը սենեկի ի խնդ-



Ուէդսըն գլխաւոր պանդոկ երկամշակէն ի Պոմպէյ։

դիր երթալով՝ համարեցայ որ ինձմ պանդոկս մնայու էի մինչև առանձին տեղ մը բնակութիւն գտնելի։

Գլխաւոր պանդոկ մը։

Արեւ մտեր էր երբ ես կահիկս՝ սենեակ համարեալ խորշս ամփոփելով, երկարաբայ ուղեորութեան նստմութիւնը վրայէս թոթափեցի։ Առատ ջրի բազմեթիւ մը գոգմացած՝ մեծ պատուհանին վանդակափեղկը բացի, ու մէկ հատիկ աթոռ քովը քաշելով՝ առ վայր մը շուշ առի։ Անուշ գոգմութիւն մը փոխանակեց էր ցարկուտան ջերմութեան, ու միտքս սաղութեան թրմութենէն սթափելով, — Ուրեմն, կ'ըսէի մտքս, հասարակածին երկինքն՝ է որ զըլխուս վրայէն իւր աստեղագարդ կամարը կը պարզէ։ Այն երկրին բնակչացը մէջ կը գտնուիմ՝ որոց պատմութիւնը այնչափ սիրտու ու միտքս հետաքրքրութեամբ վառած էր։ Հոս ոչ միայն նոր սովորութեանց ու նորակերպ կենաց պիտոր ականատես ըլլամ, այլ և այն կրօնի՝ որ հին համաշխարհական հեթանոսութեան մնացորդք են. քրիստոնէին քովը կուսակազմը պիտոր տեսնեմ, և գուցէ իւր մարդագործ ողբակէպներով։ Ոչ ես ի՞նչ լրջ էր գիտնալիքս, այլ ստուգապէս ականատես ներկայութեամբ։

Կը նայէի այն բազմութեան որ աղմկելով և աղաղակելով փողոցը շարժման մէջ կ'երեցնէին, կ'առաջադնէին երթեալ-

կը շտուգէր էր . ճոխք ե. պատուականք 'ի քաղաքացեաց երեկոյնեան զովք շնչելու ելած էին : Նոյն այս ատենս էր որ սկսեաց հերոսացի գաղթականաց ներկայութիւնը հաստատելու . տեղիք ու տիկնոյց, օրիորդք ու մանկունք առ հասարակ՝ ճոխ կտուաց փայլ հանգչած փողոցները կ'երթնէին :

Առսինը զուարթ կը բարձրանար՝ անսովոր պայծառութեամբ մը տեսարանը լուսաւորելով : Ծառաց ու տանց ստուերները փողոցներուն վրայ յստակ կը նկարուէին : Տանց բաց պատուհաններուն մէջէն ճրագաց բազմութիւնը ստնախմբութեան մը գաղափար կու տար : Անդրազ միտքս քաղցր ցնորարանութեանց կը վերանայ, երբ ճաշի գանգակը զիս սթափեցուց : Պանդոկին ընդարձակ սրահը՝ իջնանկիւղ բազմութիւն մը սեղանին բոլորը իրենց տեղի բռնած էին . ամենուն աչքը դէպ 'ի նորեկ հէրա գայրձառ հետաքրքրութեամբ, մինչգետ Հնդկի սպասաւոր մը ինձ աթոռ կը մատուցանէր :

— Արեմն արեւելցի ես, բսաւ ձախակողմեան սեղանակիցս, իւր հետաքրքրական քննութիւնը ընելէն յետոյ :

— Այդպէս կը համարիմ՝ պատասխանեցի, թէպէտ ե. կեանքս Եւրոպա անցուցած եմ, ու հիմա Իտալիայէն կու գամ :

— Ես ալ նմանապէս Չիւրուիոյ ծնունդ եմ, եր յաւելու բոկ ծալեցով . և հոս Լոյսի չորհանաւուց երկրորդ գործակալուստար :

— Եւ շատ տարի է որ հոս կը գտնուիս :

— Այնչափ որչափ հորկատոր չէ՝ այս երկիրներէս ծանձնարարու : Հինգ տարիէ 'ի վեր է որ հոս կը գտնուիմ, և այլ ես Հինգ տարի ունիմ ծառայութեան՝ որ հանազըստեան թռչակս իրաւամբ պահանջեմ :

Զուարթ խօսակցութեամբ համակցուած ճանքերն . թէպէտ մարդս ինձ ամենին անձանթէր էր, բայց գոնեա ես կիսով չափ անոր ծանօթ ըլլաւու քարեքաղաքութիւն ունէի, և այս գէպը համաձայնութեան շողկապ մը հաստատեց մէջերին : Այնքանից առատութիւնը ե. խաղաղանք ընտիր պատրաստութիւնը միւս սեղանակցաց սիրան իսկ զուարթացուցեր էր, ու որահը ծիծաղով ու բարձր խօսակցութեամբ կը թնդար : Եւ առաւել եւս սեղանակից պանդոկապետուհի, ոյն շնորհիւ, որ գոլով Ալմերիկացի ու երիտասարդ՝ խօսքը, ձայնն ու ծիծաղն էր անպառա : Հոս 'ի Պոմպէյ պանդոկարանիս կը համարին իբր ընտանի թռչակաւորք : Պանդոկապետը և իւր ընտանիքը, հակառակ այլոց տեղեաց

սովորութեան, սեղանին պարագլուխ կը լազմին, և իջնանոցք՝ իջեպէտ օրական հատուցողք՝ իբր հրախրեալ սեղանակիցք կը ձեռնան պանդոկապետին ապնուութիւնը վայելելու :

Գինոյ գործածութիւն գրեթէ ամենեւին չ'այ . և ոչք եւս կ'ախարհին 'ի կիր առնուլ զգուշաւոր չարով կը վարին : Բնդհակառակն սովորական բմակիւքը ջուրն է կամ կողային լիմնանջուրը, և կամ պրանտի՝ Նրաստան սողայիս : Եւ թէպէտ կլիմայն ոգեկից բմակեաց գործածութիւնը շնորհիւ, բայց և այնպէս ախտաւոր արեւցոյցը կը գանուին նաեւ բնկաց մէջ, այլ ամենասաւկու : Անտանեալ սուրճը կիքից ճաշերին, և բնկարութիւնը սիւսաւ ցրուիլ :

Գլխերուան գեղեցկութիւնն ու զովք զամենը փողոցները ծուռ գալու կը հրապուրէր : Բնկերան հրաւերքին ունկեղիր՝ պանդոկին գուռն որ 'ի իջնեք՝ առաջին դաս մուէրէ գէպ 'ի բնկաց քաղաքը կ'ուղեւորէր, որ մեր սուղէն գրեթէ ատուը վայրկեան հեռու է . այս միջոցս որ մինչև ցայժմ անչէն գալտ մըն էր, հետզհետէ նորանոր չնքերով գոցուելու հետ է, և որպէն մեծագործ շուկայն, և աւելի եւս մեծագործ երկաթուղայն նորայէն կայառան՝ ուղիղ գծով գրեթէ զփողքը, որ է նախկին բերդը, և որու ծայրը կը գտնուի քնտկամ պանդոկս, ընկի Հնդկաց քաղաքին հետ կը շաղկապէ :

Գրամուէյն հասարակաց ծառայութեան որոշեալ՝ առ հասարակ ամենուն, ինչ տատիճանի և ինչ և ինչ միճակէ ըլլան, իրաւունք կու տայ ուղած տեղը բռնելու : Բայց հոս 'ի Պոմպէյ Եւրոպացոյց մասնաւոր ու շաղկարութիւն կ'ըլլուի : Եթէ բնիկ մը մեր ծառայութիւնը անախտը թէ է, և եղանակաւ մը ցուցուի, փութով տեղի կու տայ և Եւրոպացոյցն արձակ ընելով՝ անտրասուջ ուրիշ տեղ կ'անցնի . և այս անանկ յարգութեամբ կը կատարէ՝ որ չըլլայ թէ հիւրին տեղութիւն մը պատճառէ, Բայց եթէ կատը շատ լեցուն ըլլայ ու տեղի տալը անկարելի, հարկ է որ Եւրոպացոյցն համբարէ, և թէ չուզեր ինչալ ու հետի քալել՝ Գծարդոյցն ալ անանկ յաճախորդաց բազմութիւն կայ, որ որոշեալ ժամերու ոչ երբեք կտուաց մէջ տեղիւրդ տեղի կը դրանուի . և եթէ ըլլայ ալ՝ շուտով կը բռնուի :

Աստիւն մէջ երկուքս քովէ քով նստած՝ հետաքրքիր աչք մը կը չըջնցնեմ բազմականաց, ամենուն հագուստը պարզ ու միւս նոյն է : Սիւնն գլխարկներն է տարբեր, Հնդկաց այլեայլ գասակարգութեանց որոշիչ նշանն ըլլալով : Անմիջապէս քովս նրա-

տողը ամենէն ընտիրը կրնայ համարել, ու գոյց էս քարհրազդ եմ զիրքը թովս ունենալու, թէպէտ և սոհաւարակ ամենուն արտաքին երևոյթն եւ րապտցւոյն խորշիկ կը թուի: Բայց ընկերս, տեղացի ժողովրդեան աւելի փորձառու, ուշաքրտեթեան հայեացք մը կու տայ անոր՝ և անմիջապէս ինձի գառնալով,

— Չգոյշ կեցիր, կ'ըսէ. եթէ քովդ ստակ ունիս՝ խնամք տար. քովինդ մասնաւոր ցեղի մը մարդոց կը վերաբերի, որոնք արուեստիւ գործ կը ծնանին, այնպէս և կը անանին:

Այբերս ամառ մը կը բանամ՝ ու զարմացմամբ ընկերոջս կը նայիմ:

— Մի գարմանար, կը զարտառախանէ աւելիս, ըսածս փորձով գիտեմ. և որովհէտե և ժամանակ ունինք պատմեմք քեզի այդ ցեղին յատկութիւնը. միայն կը յանձնեմք որ խօսած ժամանակս քաղիդ ուշ գնես: Որչափ կ'ու տեսնես որ քովի մարդդ արիւշ առարկաներ գիտելու գրազեալ կ'երևնայ՝ գիտնաս որ իւր բոլոր միտքը քսակիդ վերայ կրնայ ըլլալ, թէպէտ և եւրասացուց զպշկերս կը զգուշանան:

Գիտնալու ես ուրիշն որ զողոթիւնը ու յափշտակութիւնը Հնդկաց այլ և այլ ցեղերու մէջ առարկանալն ու ժառանգական արհեստ մը համարեալ է. անանի որ իրենց մօրը կ'աթին հետ գողնալու արհեստն ալ կը ծնեն, Պոլսի Դաւաղը Պամբոսայ կոչուած ցեղի մը կը վերաբերի, որոնք Բուխայի մօտերը կը բնակին. Բուխա երկաթուղիով միջ ժամ հնոյ է Պոմպէլէն: Այս ցեղի մարդիկ այնպէս գեղեցիկ մէջ ամառուած կը բնակին. իրենց յատուկ երկիրներ և անդեայք ունին, ու հանգիստ կեանք մը կը վարեն: Մէջնունէն ամենէն նշանաւորներէն ոմանք ՏՕէն մինչև ԴՕ(00) առօրէ արժէքով երկիր ունենալով հարուստ կը համարուին, և ազէկ չինած սուսերու մէջ կը բնակին:

Սակայն առ հասարակ սոյ գեղի ժողովարդն արհեստիւ գործ են ու քսակաշատ և հիմա իրենց արուեստին ասպարէզ երկաթուղիները ըրած են: Արպէս զի այս իրենց արհեստն աւելի սպաշով կերպիւ ի գործ գնեն, հեռաւոր տեղուանք կը ճանապարհորդեն: Ինքնապի հիւսիսային կողմեր և Մատրասի հարաւային զին շատ կը յաճախեն. երկաթուղիոյ ամեն զիծերը իրենց վախճանին ծառայեցնելով՝ վերջապէս առատ աւարաւ տուններին կը գառնան: Կանոն մը ունին որ արեւը միտնելէն ետքը մինչև արեւուն ելլելը գողութիւն չեն ընեն. բայց այս կանոնը երկաթուղեաց կառքերուն մէջ խստիւ չեն պահ-

չեն. անոր համար ալ քեզ կը զգուշացնեմ որ գրպաններուդ աղէկ ուշ գնես:

Փաղաքները ու վաճառատեղիները կը յաճախեն յիւրաք, սակայն իրենց բուն կանոն ըրած են երկաթուղիներէն չհեռանալ: Արք և կանայք առհասարակ կրթեալ են այս արուեստին մէջ: Էրիկ մարդիկ եւրորդ կորգի կառքերը կը մտնեն. ու երբ գիշերանք ճանապարհորդք կը թմրին ու քուն կ'ըլլան, պատեհը քաղելով՝ անոնց քսուկը, անոնց կապոցները, և ուր կանկոթին թէ գոհարեղէն կրնայ գտնուիլ, կը կտրեն, աւարը կ'ուսուեն, և առջի կայանը հասնածուէն պէտ, վար կ'իջնան կ'անհրկուծանան: Կանայք միւս կողմանէ նոյն բանը կ'ընեն կանանց կառքերուն մէջ, և յոնց գնութիւններն քիչ մըն ալ անդին տանելով՝ անկասկած քնացողներուն վերայն տեղերը, գոհարեղէնները, սպարանջանները կը հանեն կ'ուսուեն. անանի ալ վարպետ են իրօր ու գեղջ բաները միանին պահելու՝ որ ինչ և ինչ խնդրաւորութիւն ունայն կը հանեն:

Երբ խմորովին կ'ելլեն գողութիւն ընելու, էրիկ մարդիկներէն սմանք ճոխ շալւրով ու յարգի գոհարներով կը զարդարուին, որպէս զի իրենց արատքին երկուք թովը կարծել տան թէ ճոխ ճանապարհորդք են:

Մինչդեռ ընկերս այս խօսքը դուրսնելու հետ է, հետաքրքրաբար կը գառնամ թովս նստող Հնդկին կը նայիմ. և յիւրաք կը տեսնեմ որ հազուաւոր ստորագրութեանը համեմատ է. իւրաքանչիւր ուկանքը հինգ հինգ ոսկիէ ոչ կ'ուսած է, իւրաքանչիւր ոչ ալ մարգարտներով ու գոհարներով զարդարած: Այլքովս նշան մը կ'ընեմ՝ ընկերոջս, ու պզտաստ սեղմելով ձեռքովս քսուկս կ'ապաշովցնեմ: Իսկ ընկերս իւր խօսքը շարունակելով կ'ըսէ.

— Ատոնցմէ ոմանք ճոխ Պրոհմիք կը ձեւանան, որպէս զի ամենին կասկած չըտան: Աններ գրպաններուն մէջ ապակիի կտորներ կը արհեստ, և բերաններն այսինքն մէկ կողմը՝ փոքր ու հատուկ կորածն գմելին մը՝ որու ուսմանը անունը կու տան. և այս ամենը կը ծառայեցնեն այլոց քսակներն ու գրպանները կտրելու:

Ատոնք ոչ երբեք աւաղակութիւն կամ բուն յափշտակութիւն կ'ընեն. միայն բազալներու ու գեղերու մէջ ինչ որ առջեւին ելլէ, առանց խղճելու կը գողնան կը տանին: Ուր բազմութիւնը խուռն գիգուած է՝ շատ խիթային են. տղայոց վրայէն գոհարներէն և ոսկեաց զարդերը հնչուեալ կը գողնան, մարդոց ալ գրպանները մեծ վար-

պետութեամբ և առանց կասկած կամ նշշտն տալու՝ կը կտրեն ու կը գողնան Կանստեյմմէ՝ անանկներ որ շողեկառաց մէջ աւելի ճշտեալ և ապահովութեամբ գողնալու նպատակաւ՝ Վերորժորմը 'ի կիր կ'առնուն, որով կը սաստկացնեն քնացող ճանապարհորդաց թմրութիւնը, Մասնաւոր լեզու մը կը խօսին, որ կը կոչուի Դեւելկու։ և իրենց պաշտած յատուկ աստուածն ալ ունին, որ կ'ըսուի Ելլամա։

Բայց միայն այս Բունայի Պաճրտայք չեն որ ասանկ սղնուական արհեստի կը զբաղին. կան ուրիշ մէկ քանի ցեղեր ալ որ ասոնցմէ սերած կը համարին, և կը բնակեն 'ի Քանտէշ, 'ի Պէրար և 'ի միջին գաւառս, և կը կոչուին Բաթուրքար. ասոնք ամեն ալ նմանապէս արուեստի վարպետ քաւահատ են. այլ իրենց կենաց իրր բուն զբաղանք է դանակ սրելու քար չինել կամ նորոգել։ Խոսած լեզուինն նմանապէս գէլլկուն է, և Պաճրտայք նման մի և նոյն կառնենքու կը հետեւին գողութեան արհեստին գործադրելու համար։ Մի և նոյն զմէլինը 'ի կիր կ'առնուն զբաղանքը կարելու, որու և նոյն անունը կու տան։ Այս գլխիկը՝ ստորին ծնոտին և այտից մէջ տեղ եղած խորը կը պահեն. և այս խորը մասնաւոր ու կանոնաւոր եղանակու կը պատարաստեն նոյն զմէլինը ընդունալու. գիշեր ցորեկ բաւական ժամանակ նոյն տեղը ապի կտոր մը կը պահեն, մինչև որ ըստերը կը կոշտանայ և անզգայ կ'ըլլայ։ Գիշինքի Բաթուրքարը շատ վարպետ գող ու քաւահատ են. Տօնաւաճառները ու շարաթական վաճառանոցները շատ կը յաճախեն. և տոհմասարուկ արք ու կանայք վարժ քաւահատ են. ինչ գտնեն, ինչ բանի վրայ կարենան ձևեր գնել՝ կը գողնան կը տանին, տղայոց վրայէն գողանալէններն ալ վերցնելով։ Սակայն ասոնք դեռ ևս երկաթուղիները իրենց գողութեանց ասպարէզ չեն բրած։ Երբ մէկը ասոնց հանդիպելով հարցնէ թէ ոչք են, ոչ երբեք ասոցը կը գտրեն, հապա գրեթէ միշտ կը պատասխանեն թէ Պիլտարք կամ Քամադիք են։

Որովհետեւ Հնդկիք այլևայլ դասակարգ բաժնուած են, անկախ իրարմէ և առանց իրարու հետ խառնուելու, այսպէս ալ արուեստք մէջնրնին մշտնջենաւորապէս ժառանգական են. որով և գողութիւնն ալ համարեալ գոյով արուեստ, իրր իրաւացի ժառանգութիւն որդւոց յորդիս կը յաջորդէ։ Միանկ ճարտարութիւն կը ստանան գողութեան մէջ, որ աշխարհիս վրայ չըկան գողք՝ որ Հնդկի գողաց ճարտարու-

թեանը հաւատարին։ Չորմանայի է լսել անոնց համբերութիւնը, յարատեւութիւնը և մոքէ չանցնելու ճարտարութիւնը, ուրով արթուն ու գինեալ մարդոց մէջ մըտնելով՝ առանց անոնց անդրադառնալուն՝ մոքէ չանցնելու յանդգնութեամբ իրենց որսը, նաև ամենավտանգաւոր պարագայներու մէջ ալ, կը յափշտակեն կը տանին։ Սակայն որչափ խիթալի են իրր գող՝ նոյն չափ ալ վստահանալի են երբ իրր պահապան ծառայ կ'առնուին։ Անոր համար ալ թէ գիւղորէր վարչութիւնը և թէ առանձնականք այս դասուց գողներէն կ'ընտրեն կ'առնուն իրենց պահապան, որ մեծ գրաւական էն ապահովութեան ընդդէմ՝ բուն իսկ իրենց դատուն գողոց։ Այլ և օտար գասուց գողոց դէմ ալ մեծ արթնութեամբ և յաջող ճարտարութեամբ կ'աշխատին յօգուտ իրենց տնայր։ Կան 'ի կուզերադ այսպիսի պահապանք՝ որ մեծ հշշակ ունին իրր մանաւոր տաղանդ ունեցող գողներ գտնելու. գողին ոտից նշանները գիտնելով անխաղձ ետեւէն կ'իյնան ու վերջապէս զայն կը գտնեն։ Չոր երկիր մը և տաք եղանակին՝ մարդուս ոտքը գետնի վրայ անզգայի նշան մը կը թողու, որու անտուժոր աչքը ամենին չանգրադառնալու և սակայն այս պահապանները անանկ աղէկ կը հասկնան այս հետքը, որ այն անզգայի նշաններուն միջոցաւ չհաւատալու հեռաւորութեամբ գողի մը ետեւէն կ'իյնան ու կը գտնեն զինքը։ Անգամ մը եղաւ որ գինուորականներու արծաթիդէնները գողցուելով, սասնի մէկի մը յանձնուեցաւ գողը գտնելու։ Չորս Հինգ վարսախ հեռաւորութեամբ գողին ետեւէն գիմլէն յետոյ, Ամենտապար քաղաքին բազմամարդ փողոցաց մէջ յանկարծ հետոց նշանները կը իրանցիւ. սակայն առանց լքանելու յարատեւութեամբ փնտռելով, գտնեցին մէկի մը մօտ դարձեալ կը գտնէ զանոնք. և թէպէտ գողին վարպետութենէն առ վայր մի էր մոլորել, որ իր ետեւէն ինկողները խարելու մօտք խել մը տեղ ազոյ գետնակ մը մէջէն քալել էր, որու ջուրը մինչև ծունկը կը հասներ, վերջապէս յանձնարարութիւնը գլուխ կը տանի, և տաք վարսախ հեռաւորութեամբ գողութեան հանդիպած տեղէն՝ գողը կը գտնէ և արծաթեղէնները ձեռքէն կ'առնու։

Սակայն այս կերպ կերպ գողոց պատմութիւնը երկայն է ու հեռաբարբաղական, ու եթէ հոս քանի մը ամիս մնաս, գոյցն աչքովդ ալ տեսնաս ու փորձ ըլլաս։ Հիմա ահաւասիկ մենք բնիկներուն քաղաքը հասանք, ու հոս լաւ կ'ընենք վար իջնելու։

Մինչդեռ ընկերս այս խօսքերը կ'ըսէր, կատրք մեծագործ չէ՞րքի մը առջևը դադարեցաւ, ու մենք վար իջնելով,

— Սա էջերն որ կը տեսնես, յաւել քու լուսարժանի տեսնելու մեծագործութիւն մըն է։ Փաղաքին զլխաւոր վաճառանոցն է, և կ'արժէ որ առաւօտ մը կանուխէկ գաս այցելութիւն մը ընես։ Տեսնես պիտի թէ Ունգզիպիք որչափ արդիւնաւոր են այս ժողովրդեանս առջին, որ շատ քիչ օգուտ կը քաղէ անոնց քաղաքակրթութեան միջումէն։ Եկուր Հիմա սարնիկներուն քաղքին զլխաւոր փողոցը մտնէր, տեսնես քիչ մը թէ ինչ են այն մարդիկ՝ որոց աշխարհը օտարը գտնէ իրաւամբ գրաւած են։ Բայց այս ալ գիտնաս որ այս գիւղային երկույթը որչափ զուարճալի երևնայ քեզի, նոյնպէս գտնէ նոյնպիսի տապաւորութիւն ընէ վրադ եթէ ցորեկը այցելես։ —

Այնուի մը, չփութ մը, հազար ու մէկ խառնածափնութեանց շաղիւնը ականջիս սկսան խուլցնել։ Հրազուն անհամար բազմութիւնն՝ այն փողոցին տօնախմբութեան մը երևոյթ կու տային։ Բազմութիւնը կը վխտար։ ալխաւորութիւն մը, գործունէութիւն մը, անվերջանալի դադանք մը կը տեսնուէր ամենուն վրայ։ Ոմն աղմկելով, շառաչելով՝ բան կը ծախէր, ոմն կուռելով, աղաղակելով՝ բան կը դառնադէր։ Կանանց բազմութիւնը մը խանութից առջևը կիցած ծիծաղելով ու պոռալով կը գնէին ու կ'ուտէին, մինչդեռ մերկ տղայոց խումբիւրը բազմութեանը մէջ վազվէտալով այն խառնակութիւնը կ'աճեցնէին։ Երթեւեկով ու շարժանքով այն նեղ փողոցը կը դեռար։ Կարծես մանաւոր տօնախմբութիւն մըն էր՝ որ այնչափ ժողովուրդ գուրս ձգեր էր։ Այն բազմութեան վրայ յաւել ևս կառաց անցողաբար, և այն ատեն մարդ կրնայ զաղափար ունենայ այն խառնակութեանը՝ որ այն համեմատութեամբ անձուկ փողոցը կը տիրէր։ Կառապանին խարուղանին շառաչը կը լսուի և անմիջապէս ճակարդաց հետի ընթացիկ մը պօռալով բազմութիւնը կը ճեղքէ, որ իրարու վրայ խռնելով, ճգմուելով՝ կառքին ճամբայ կը բանայ։ Մերկ շնորհք, երիտասարդք ու տղայք, խանութներուն վրայ կանգուն բազմութեան ու շաղիւն կ'երևնան։ այլը անոր հակառակ, անգրաղ խանութին պարկեւտ միջոցը փուռած կ'երգակն։ Իւայսր ամենայն լրտմն հեռաւոր թմբկի ու խառնածայն երաժշտութեան շառաչը, որով ողջոյն միջոցը կը թնայ։

— Սա խանութները դիտէ, ըսաւ ընկերս. խանութ ու տուն մի և նոյն բան է՝

սեւ է։ Որ կը տեսնես որ իրենց առեւտրոյ նիւթերը ամբարած են՝ մի և նոյն տեղ իրենց անկողինն ալ փառած կը գտնես։ —

Տեսնեմ խանութներուն լայնութիւնը հազիւ երկու մէկը կը չափէ։ Խորութիւնն ալ շատին անկէ նուազ։ գետնէն միւտ ծնկէ վեր բարձր են, որպէս զի հեղեղաբար անձրեաց եղանակին ջուրը ներս չընդուն։ Խանութներուն քովը նեղ ու մութ սանդուղ մը վերը տուն կը հանէ։ Տուները նեղ կ'երևան, այլ բազմադարի։ Այն խանութներուն մէջ ուտելիք զատ ուրիշ բան չիմ տեսնար. իսկ ուտելիք զլխաւորապէս շաքարեղէն են, կամ ընդեղէնք ու համեմունքներ։ Սակայն ծախողաց երևոյթը անակ քստմնելի կ'երևայ՝ որ կիրթ այցելուին ակորժը կը գոցէ. այն միւրկ և աղտոտ մարմինը, այն անուշայ ձևերեն՝ որ ամենայն նիւթ կը չըսփռեն, թող խանութին աղտոյի երևոյթը, ամենէն անօթի ստամոքսն ալ կը խրտեցնեն։ Չեմ կրնար անգրադարձութիւն մը լռել ընկերոջս։

— Կարծեմ, կ'ըսեմ, շնորհքն առաքինութեանց մէկ մըն ալ աղտոտութիւնն ըլլալու է։

— Գլխաւորը և նախնագոյնը կրնաս զուրցնել, կը պատասխանէ ընկերս։

Այս առաջին գաղափարը այնպէս խոր ստաւորեցաւ մտացս մէջ ու սիրտս չըջնցուց, որ ցորչափ 'ի Պանկէ կոչայ' ոչ երբեք խանութի մը միւրձեցայ կոկորդի հրապուրիչ մը խնդրելու, բաց 'ի Պանան պըսպէն, որու նուրբ մաշըր թղի նման կը կեղևի։

Փանկէ՞ր փողոցին մէջէն կը յառաջնե՞ր տեսարանը աւելի 'ի դեկորի' լրագմութիւնը աւելի կը վիտայ, լուսաւորութիւնը աւելի կ'առատանայ, մանաւանդ ուր այլազաւան շնորհաց դաս մը իւր դից տօնը կը կատարէ։ ողջոյն փողոցը լուսոյ դրամազներով զարգարած է, ու խառնածայն երաժշտութիւնն ականջիս կը խլացնէ։ Տանց իսկ պատուհանք քաջ՝ ներքին լուսաւորութիւնը արտաքինն հետ կը խառնեն։ Կարծեմ չեմ վրիպիլ ըսել որ շնորհաց տօնախմբութիւնը երկու բանի վրայ կը կայանան. լուսոյ առատութեան և խառնածայն աղմկի վրայ։

Մենք փողոցէ փողոց անցնելով՝ արհեստէ արհեստ ալ կ'անցնինք. ուտելիքաց խանութներուն կը յաջորդեն աղնձագործաց խանութները, ապոնց ալ հետզհետէ կը յաջորդեն խոյրարացաց, ապարանջան վաճառողաց, լաթեղինաց, և այլ ճարտար ձեռագործաց կրպակները։ Կռկակարաց խանութները ունայն տեղ կը փնտնեմ։

այս այնպիսի բերք մըն է՝ որ 'ի Հնդիկս տառաջ չի գար. և թէ ոչ ուզեամք՝ բացառութիւն մը ընել մէկ երկու խանութներու, որ տեւակ մը հողաթափ կը չինէ կարմիր կաշիէ, 'ի պէտս դասու մը Հնդկաց որ Արգոնացոց քովը իրի գրագիր, թարգման կամ սպասուոր կը ծառայեն: Իմ այս ներթիս վերաբերեալ հարցմանս՝ ընկերս կը պատասխանէ:

— Եթէ դառնաւ Եւրոպայ՝ գգուշացուր բաղդախնդիր կոչկակարներն ու թաշկիւնակի վաճառականք, որ չըլլայէ՛ չա՛նու արկնալոր թեմամբ 'ի Հնդիկս գիմեն. գիտնան որ երկրորդ օրը կը սնանկանան:

— Ես, ըսի, աւելցնեմ՝ պիտի նաև գերծակները, որոց արուեստը՝ ինչպէս կը տեսնեմ՝ բոլորովին անօգուտ է այս աշխարհս:

Միծաղելով ու խօսակցելով այն բազմութիւնը կը ճեղքենք, որ մեծարանք ու երկիրազնութեամբ տեղի կու տան մեզի անարգել անցնելու: Այն իրենց յարգանք երկիրազնութիւնը 'ի նպատակ կու գայ իմ զգուշութեանս՝ չսպելու այն աղտոյի հանդերձիք ամբոխին: Ինձ կ'երևի թէ այնչափ մեծարանք առ Եւրոպացիս եթէ կրթութեան մը հետեանք չէ, գոնէ իրենց քաղաքական վիճակէն առաջ կու գայ:

— Անգղիացիք, կը յաւելու բնւր ընկերս, անանկ երկիրը տպաւորած է այս բնկաց սրտին մէջ, որ Եւրոպացու մը ներկայութիւնը բաւական է մեծ բազմութիւն մը ցրուելու: Թող որ յաղթող տեարք ըլլալով միշտ սովորած են զատնք իբր ստորին սարուկներ կամ մարդկային դասակարգութեան մէջ իբր ստորնազոյն էակներ նկատելու: Եւ այս զգացումը անանկ տպաւորուած է քրիկներուն մտաց մէջ՝ որ արտաքին նշաններով ալ կը ցուցնեն: Սակայն չհամարիր թէ այս իրենց ցոյց տուած ուրաքին նուազած ծառայականութիւնը սիրոյ արտայայտութիւն մըն է: Հնդիկը կը ճանչնայ իւր նուաստութիւնը եւրոպացոյն առջև, և այս համոզումը կը ծնանի յինքն հաւելութեան գգացումը: Այն խոնարհ կալուստիութեան քոյին տակ գիտցիր որ խորին առեկութիւն մը կը բուսի. այն օրն որ Հնդիկը իւր բաղուկը հօգոր ըզգայ, գիտցիր որ Եւրոպացուց վերջին օրն ըլլալու է:

— Կը յուսամ, պատասխանեցի, որ այն օրն չեկած՝ ես այս երկրէս ութ հազար մը զին հեռի կ'ըլլամ: —

Այս ատենա ազմկալից բազմութիւն մը ջահերով ու հրախաղութեամբ հանդիպակաց փողոցէ մը ելլալով՝ միւս փողոցը կը

մտնէ: Հեռի գնացող բազմութեանը մէջ ընկզմամբ փողահար ու թմբկահար երաժշտաց խումբ մը, գիւական շառաշմամբ օղբ կը թնդացնեն. կիսամիկը սրկայք ցատ. քելով ու պարկելով իրենց կը հետեւին: Անոնց կը յաղթողեն երկձի կառքեր ոսկէ. պաճոյճ բազմականներով, որոնց շարքը մերթ ընդ մերթ ձիաւոր տղայք կ'ընդգծուեն: Առ հասարակ տղայք և երիվարք առ ծաթիւս և սկիւս և զոյնզոյն զարդուք ծածկուած են: Մեծահանգէս թափօր մըն է, որու կոչնականք իրենց փառաւորութեան պարծանքը կը շապեն. սիգաճամ լուսթեան երևութիւն իրենց փառասէր ոգին կը յայտնէ. հեռի գնացող առմիկը և ոչ հայեացքի մը արժանի կը համարին:

— Ու գիր, կ'ըսէ ընկերս, հարսանեաց թափօր մըն է որ կ'անցնի՝ հարսին տունէն փեսային տունը երթալով: Հարսանեաց ե. զանակն է հիմա, և այսպիսի հանդիսից ասկէ ետեւ ամեն գիշեր ականատես սիւտոր ըլլաւ: Տես այն կառքը՝ ուր այն փոքր աղջիկը նստած է՝ հարսն է. իսկ փեսայն այն մարդն է՝ որու երեսը ոսկեպս գարգելով ծածկած կը տեսնու: Հարսը գուցէ եօթը տարուան չկայ. երկրիս սովորութիւնն է այսպէս մատուցող հասակի մէջ հարսնացուն: Բայց մի գարմանար. ուրիշ անգամ՝ տոթի կ'ուռնանա այս բանը աւելի մօտանց հաստատելու. հիմա մենք այս փոփոցը բռնենք: —

Թողուցինք որ հարսանեաց թափօրն իւր ճամբան յառաջ տանելով հեռաւորութեան մէջ անցայտի, ու մենք մեր բռնած ճամբան շարունակեցինք: Ժամը երթալով յառաջուրէն հետ էր ու փողոցները՝ քանի որ կեդրոնէն կը հեռանայինք՝ կը սկսէին լըռել, մթննալ ու խանութներուն մեծ մասը զոցուիլ: Խուսին շերեակալիլի պայծառութեամբ անամազ երկերին վրայէն կը լողչողար, և մենք խօսակցելով՝ փողոցէ փողոց կ'անցնէինք: Լուսթեան այնպէս խորին կ'ըլլար քանի որ մենք նկատելով կամ հեռուները կը մտնէինք՝ որ տեղ տեղ մեր ոտից ու ձայնից արձագանքը զարմանալի յատակութեամբ կը լուռէ: Փողոցներուն մէջ գետնը ասոյիս անդին կոյտեր կը տեսնէի, նման ցորենի պարկերու. տանց դռներուն առջև մանաւանդ այն պարկերը հինգ, ութ, տասը հատ քովէ քով գետնը պատկեցուցած՝ անհոգ, անխամ, անպահապան թողած կ'երևնային, ինչպէս թէ տիրով մը սեփականութիւն չըլլային:

— Նատ պարկեղա ըլլալու է, ըսի, ծոգովորդա, որ ցորենի խուրճները այսպէս անխամ և առանց հսկողի փողոցին մէջ

տեղը կը թողուն: Անշուշտ գողոցը երկիւղ
բլբլաւ չէ:

Այս բակում մէկի մը վրայ ոտք կը դը-
նէի կոտիլու անցնելու, ճամբուս առջին
գտնուելով:

— Զգուշ կեցիր վրան չիփսես, կանչեց
չնկեր՝ թե՛ և բռնկով: Այդ պարկերն որ
կը տեսնես՝ Հնդկիննրու խումբերն են, որ
իրենց հանգերով տեղ ծառայող լաթին
մէջ պլլումա՝ հանգիստ գիշերային քուն
կ'ըլլան:

— Մարդիկ են այս խորձերն, ըսի զար-
մացմամբ, և կենդանի: Ուրեմն ասոնք և
սչ տան մը, անկողնայ մը, կամ ինչևիցէ
կահի մը պէտք ունին: Երկրիս որ կողմն
ալ խնտն իրենց հանգիրտը կը գտնեն, ան
ալ ամենադիրտագնոյ:

— Ըսածդ ստոյգ է. անոր համար ալ ա-
տոնց բոլոր ինչքը ծածկոց մըն է, որ գիշեր
ու ցորեկ հաւասարապէս կը ծառայէ:
Առկէ զատ իբր անմահելի կարասս սղորն-
անց ստոման մը ունին, որու մէջ իրենց
անհրաժեշտ կարիքս տարբը, որ է ջուրը,
կը պահեն: Առկէ կրնաս գուշակել որ ինչ-
և ինչ ժամանակ Հնդկիւր, առջի ձայնին՝
առանց նկողութեան կամ առանց վնասու
պատրաստ է գաղթելու: —

Այսպէս զգուշութեամբ քայլելով կ'անց-
նիմ այն անշուշտ քնացող Հնդկաց մէջէն,
որ ի ենց ծածկոցներուն մէջ ամբասխնդ
պլլումա՝ որդերու խողակներ կը նմանին.
սչ զլուխ, սչ ստոք, սչ ձեռք կը նմարես:
Արդար զգուշութիւն ընդդէմ խայթիչ մը-
նեղաց, որ իրենց բազմութեամբ և սուր
խայթոցով՝ անոնց մարմնը մէկ ժամու
մէջ վիրայից կոտ մը կրնան դարձնել:
Հետաքրքրարար կը թուի. ինձ մօտ ե-
րիւր են քովէ քով պահկած. հանդիպա-
կաց անոնց են այլ խրկու. քիչ մը անցին
են հինգի, շատ տանց դուրսը ամբողջ ըն-
ասանք են ընկողմանած. ամենը տեղացի,
տեղաբ, անշուշտ. թէ մարդ անցնի, թէ
աղմուկ ըլլայ՝ ամեններն կենդանութեան
նշան չեն տար: Փոստը լուծեան մէջ է.
բայց այն լուծութիւնը յանկարծ սուր ձայն
մըն է կը կուրծէ, կատու մըն է, նապաս-
տակ մըն է, կ'ըսեմ, ոտիցս մէջէն անցու,
որացու, պարկերուն ետեւը տնայտ ե-
զու: Առկայն ընկերս կը փութայ իմ այս
զարմանքս լուծելու:

— Այդ քեզի նպատակն կամ կոտու
եւեհածը՝ մտիկ մըն է, որոց անհամար
խումբերը աղատարար կ'ապրին քաղաքս:
Ատոնց կարծես ոչ ոք կը դպչի, նա միանա-
ւանդ պաշտպանութիւն կը գտնեն. և
գուցէ նախահամութիւն մըն է՝ որ անոնց

առատութիւնը կը պահպանեն: Ատոնք են
որ փողոցայ մէջի աղտնաւորութիւնք կը ջնջ-
են. անոր համար ալ արդիւնաւոր կեն-
դանիք կը համարին և հնդկային երախ-
տագիտութեան արժանաւոր: Մարբասի-
րութիւնը Հնդկաց առաքինութիւն մը չէ,
աշոքք հաւատուցիր: —

Այս դէպքը բազմիցս այնուհետեւ առիթ
ունեցայ հաւաստելու: Քանի՜ քանի՜ ան-
գամ որ գիշերանց լուսին լուսովը այն լռիկ
փողոցներն ուղեցի մտնել, բնական քրտա-
մունք մը դիս ետ կեցուց. այն մեծամեծ
միտներ այնպէս աներկիւղ քայլիցս առջեւ
կ'իլլէին և անանկ բազմութեամբ, որ խըր-
տկով հարկ կ'ըլլար ետ քաշուիմ: Եւ սա-
կայն Հնդկիւր անտարբեր և անհոգ քուն
կ'ըլլայն, մինչդեռ անտիք իրենց չորս կողմը
կը շրջին: Միայն փոքր տղայոց համար
զգուշութիւն կ'ընեն, բարձր մահճակալի
վրայ ապահովելով որ չըլլայ թէ այս կեն-
դանինքնէն վնասուին:

Մինչդեռ խօսակցելով կը յառաջնեք ա-
ռանձնակ պարսպապատ անդի մը քովէն
քերելով, սաստիկ կծու հոտ մը շնչուեցս
փութով խցել կը բանադատէ: Քաղքին
լուսիքն էր, ուր ըստ սովորութեան Հնդ-
կաց՝ մամուռ որ մարդիկ տուններէն հա-
ւաքելով կ'ամբարտն ծողովման, մինչև ու-
րիշ տեղ փոխադրուի: Քաղքին ու բնա-
կութեանց մօտ և ցորեկուան սաստիկ տա-
քուն անշուշտ դրացեաց անհանգուրժելի
ըլլալու էր: Քամին քանտուշորս ծամու մէջ
իրբ կեղբորի մը վրայէն իւր շրջանն ընե-
լով՝ հարկ էր որ ամենուն ջերմ այցելու-
թիւն մը ընէր:

Գիշերային ժամը որ երթալով կը յառա-
ջե՛ր՝ զմեզ կը յարդորէ՝ դէպ ՚ի պանդոկ
փութալու: Երկաթուղին քովէն քերե-
լով, որ ծովեղբիքի ուղղութեամբ կը գի-
մէ, այրած մանգինի սաստիկ հոտ մը ինձի
ըսել կու տայ:

— Անշուշտ հոս մօտ տուն մը հարկինք
ընելու հետ ըլլալու են, թէպէտ և ծամը
չառ յառաջացած է:

— Ըսածդ վրիպակ չէ, կը պատասխա-
նէ ընկերս. միայն տեղւոյն նկատմամբ
զազափարդ կը մխալի: Այդ հարկինքը
տարին տասուեկուս ամիս, և օրը քսանը-
շորս ծամ անդադար կը շարունակէ հոս
տեղս, գուշակէ ինչ է:

— Անշուշտ մեծ հարսնիք մը ըլլալու է:

— Կը մոլորիս. Հնդկիւր միս չուտեր:
Նայէ ձախակողմդ. սա մեծ էջերին մէջէն
բարձրացած բոցին լոյսը կը տեսնես:

— Այո. և ոչ մէկ, այլ երկու, երեք
տեղ նոյն տեսակ լոյս կը տեսնեմ:

— Դատ աղէկ. ըսել է որ երկու, երեք
Հնդկեր կը ճենճերին:

— Ինչ ըսել կ'ուզես:

— Իսկ կ'ուզեմ որ Հնդկեր իրենց մե-
ռելները չեն թաղեր հողին տակ, ինչպէս
մենք սովոր ենք ընելու. հապա գիտե՞լ
կասկարայի մը վրայ գնելով՝ խարոյկը կը
վառեն, ու կը թողուն որ կրակը մինչև յե-
տին կտորը մաշեցնելով մոխիր դարձնէ:

— Ուրեմն այս իրեր Հնդկեր ալ ըսել է
որ վաղը առտու մոխրոյ կոյտ մը պիտոր
ըլլան, գոր քամին այն պարսպապատ մի-
ջոցին մէջ առնու ցրուէ պիտի:

— Եւ յիրաւի ալ այդ այդպէս է: Եւ
գարմանալու չէ Հնդկաց այս սովորութեան

վրայ, և ոչ իսկ բարբարոս բան համարե-
լու է: Հին տառն ալ կար այս սովորու-
թիւնը. և նոյն իսկ հիմա յԵւրոպ գտը-
ծիսլ նոյն յարուցանելու հետամուտ են,
ինծի աւելի բարբարոս ու քստմնելի եւ
ընցած է միշտ Փարսիներուն յուզարկա-
ւորութեան արարողութիւնը: Սակայն այս
երկու տեսակ տարողութիւն մօտանց
տեսնալը ուրիշ առթի թողուլը լաւ է. և
թէպէտ երկրորդներուն տեղւոյն այցելե-
լը գծուարին ըլլայ, կը քանամ բարեկամի
մը ձեռք գիւրացնել:

Մեր խօսակցութիւնը զմեզ մինչև պտն-
դողը բերաւ, ուր իրարու գիշեր բարի
մաղթեցինք:

Շարունակելի.

Հ. Յ. Վ. ԻՍԱԿԵՐՏԵՑ:

ՄԵԾ ՀՐԳԵՀ ՄԵԻԹԱՐԵԱՆ ՎԱՆՈՒՑ

1883 ՏԱՐԻՈՅՆ ՅՈՒԼԻՍԻ 14ԻՆ

Ա.

Միտիթարեան Ուխտին յիշատակարանաց
մէջ, 1883 տարւոյն, Յուլիսի 14ին գիշերն ա-
ղետալի ցաւաց յիշատակ պիտոր մնայ: Շարաթ
գիշեր էր և վենետիկեան հնաւանդ տոնախմբ-
բութեան մը տարեգարք, որ տարուէ տարի
ողջոյն քաղաքը և անոր շրջակայից զբոսասէր-
քը՝ մեծ շարժման մէջ կը դնէ:

Ձերմ, խղճուկ, անհանգուստելի տօնոյ ցո-
րեկը՝ երեկոյեան մութին որ տեղիք կու տար,
մեղմ քամի մը հարաւէն շնչելով՝ քիչ մը զով
կը ախուր այն ընդարձակածաւալ լճակին վը-
րայ: Աշխատութենէ և աւելի ջերմէն խոնջ՝
հանգստեան առանձնարանս կը փութայի. Ժաւ
մը երեկոյեան գրեթէ ինն էր: Առ վայր մը
պատուհանի մը առջին կը դադարիմ, ուսկից
տեսարանը հեռու հեռու կը ձգի մինչև Ժառա-
գարդ կղզեկաց սահմանը: Այն լճակին խաղա-
ղաւէտ երեսին մրայէն, հարիւրաւոր սրարդաւ
կոնտուլոյք, գունաղոյն կանթեղք գարդարեալ,
քաղաքէն դէպ 'ի Լիտս կղզին՝ Ագրիականին
ծովափը՝ կը գիմեն: Հոն՝ այն հուշակաւոր ծո-
վային բաղանեաց զբոսավայրը՝ հազարաւոր
մարդոց թաղմութիւնը՝ կերտաւորով, երամբ-
տութեամբ, թարրերգութեամբ ու պարով՝
ողջոյն գիշերը յանգ պիտոր հասնէ: Արդէն
կղզւոյն երեսը լուսոյ մէջ ընկզմած կ'երևի.

լուսաւորութեան անհամար կանթեղաց լոյսը
անդորր ջրին վրայէն անդադառնալով՝ կեդ-
րոն վայրը հնոց մը կը նմանցընեն. մինչդեռ
պարտիկաց Ժառոց ետեւէն մերթ ընդ մերթ
հրախաղութեանց փայլատակունք կը հատա-
նին: Մարդոց աղաղակը, կատաց աղմուկը,
երամշտութեան շառալը՝ միանգամայն իրարու
խառնուելով՝ այն վայրը կը վրդովեն: Որչափ
ուրախութիւն, որչափ յոյս, որչափ երջանկու-
թեան զգացմամբ արդեօք այն երիտասարդ ամ-
բոխին սիրտը կը բարախէ:

Այլ ես բարեբաղդաղոյն կը համարիմ գիս
առանձնութեանս հանգիստը ամփոփուելու, և
ողջոյն այսպարհիս բարի գուարճութիւն կը մաղ-
թեմ: Թմրութիւնը չի յապաղեր անզգայութեան
մէջ գիս ձգելու. և թուր թէ այն վիճակը մտեր
է՞ի՝ որ ոչ արթնութիւն է և ոչ խորին քուն. և
ահա մերձաւոր աղաղակաց շփոթ կը սկսի ա-
կաննալ խայթել. ուրախութեան թէ սպանա-
լեաց ու երկկիզի ձայնք էին, չէի կարող ըմբռ-
նել. բայց կը համարէի թէ մերձաւորքս 'ի հե-
ռուստ խնդակից կ'ըլլային զբոսասիրաց: Բայց
և այնպէս շիփով գաղափարքս չէի կարող հաշ-
տեցնել. ինձ անպատշաճ կը թուէին այն ձայնք
և հակառակ բարեկարգութեան:

Թուր թէ ըստ բաւականի երկայն տեւելին
այս թմրութեան խորհրդածութիւնք, առ սա-
կաւ սակաւ անզգայութիւնս թեթեւցնելով՝ երբ
յանկարծ ամուր մը ցնցուեցայ ու սարսափով